# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 55-Ա

«13» հոկտեմբերի 2020 թվական — գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

**որոշում է**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 7 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:
   (Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյան):
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 86-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :
   (Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյան):

3 .Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արեգնադեմ բնակավայրի 13-րդ փողոց, թիվ 3 բնակելի տունը աճուրդով օտարման աճուրդային

հանձնաժողովի(աճուրդի կազմակերպիչ) գործունեության կանոնակարգը հաստատելու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյան):

4 .Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի 2-րդ փողոց, 9 շենք, 9 բնակարան հասցեում գտնվող 32 քառակուսի մետր մակերեսով բնակարանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի բնակիչ Մուշեղ Անդրանիկի Ղազարյանին անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյան):

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի թվով 4 բնակչի միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին :
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բյուջեից <<Հայաստան համահայկական հիմնադրամ>>-ի <<Մենք ենք մեր սահմանները>> համազգային դրամահավաքին գումար հատկացնելու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

| | *Կողմ՝ 6* | *Դեմ՝ 0* | *Ձեռնպահ՝ 0* |
|---|---|---|---|
| Հ. ՆԻԿՈԼՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ԴԱՎԹՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ՄԻՐԶՈՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ՔՈՉՈՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«13» հոկտեմբերի 2020թվական
գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 56-Ա

«13» հոկտեմբերի 2020 թվական                                                                 գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

**որոշում է՝**

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ 6 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| Ա. ԴԱՎԹՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Հ. ՆԻԿՈՂՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ՄԻՐԶՈՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ՔՈՉՈՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«13» հոկտեմբերի 2020 թվական

գյուղ Ամասիա

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Ամասիայի համայնքի ավագանու 2020 թվականի

հոկտեմբերի 12-ի թիվ 56-Ա
որոշման

## Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների կատարողականը

| Եկամտատեսակ | 2020թ-ի տարեկան ճշտված պլան (հազ.դրամ) | III եռամսյակի ճշտված պլան (հազ.դրամ) | Կատարո- ղական փաստացի ցուցանիշ (հազ.դրամ) | Կատարողական (%) |
|---|---|---|---|---|
| ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔԵՐ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ.ԱՆՁ. | 482.4 | 210 | 309.9 | 147.6 |
| ՀՈՂԻ ՀԱՐԿ | 20133.4 | 13080 | 10,659.3 | 81.5 |
| ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋ. ՀԱՄԱՐ (ՖԻԶ.ԱՆՁ.) | 17437.0 | 11340 | 5798.99 | 51.1 |
| ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 1136.6 | 809 | 761.8 | 94.2 |
| ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՔԿԱԳ-ԻՑ | 300.0 | 210 | 144 | 68.6 |
| ՊԵՏ.Բ-ԻՑ ՖԻՆ. ՀԱՄԱՀԱՐԹ. ՍԿԶԲ-ՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎ. ԴՈՏԱՑ-ՆԵՐ | 111633.5 | 83725.1 | 83725.1 | 100.0 |
| ՊԵՏ. ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՅԼ ԴՈՏԱՑԻԱՆԵՐ | 3736.2 | 2844.8 | 2844.8 | 100.0 |
| ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ | 5250.0 | | -10.9 | |
| ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 7264.0 | 4748 | 7415.1 | 156.2 |
| ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԿԱԳ ՀԱՄԱՐ | 3436.5 | 2405.6 | 2432.7 | 101.1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 4700.0 | 2000 | 1644.36 | 82.2 |
| ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ | 7196.8 | 5255 | 3827.99 | 72.8 |
| ՖԻԶ. ԱՆՁ. ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊ. ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ ՄՏԱԾ ՄՈՒՏՔԵՐ | | | 824.4 | |
| ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | | 10.693 | |
| Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը | 182706.4 | 126627.5 | 120388.2 | 95.1 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Ամասիայի համայնքի ավագանու 2020 թվականի

հոկտեմբերի 12-ի թիվ 56-Ա
որոշման

## Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի ծախսերի կատարողականը

ըստ գործառական դասակարգման

| Ծախսատեսակը | 2020-ի ընդունված բյուջե (հազ.դրամ) | I կիսամյակի պլան (հազ.դրամ) | Փաստացին աճողական տեքով (հազ.դրամ) | Կատարողականը կիսամյակի պլանի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|
| 1,1,1 Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 57001.20 | 33742.90 | 30584.00 | 90.6 |
| 1,3,3, Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 32726.70 | 27373.20 | 26583.30 | 97.1 |
| 1,6,1, Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 4750.00 | 2087.50 | 2069.90 | 99.2 |
| 3.2.1. Փրկարար ծառայություն | 2150.00 | 1150.00 | 875.60 | 76.1 |
| 4,2,1, Գյուղատնտեսություն | 19594.60 | 12082.10 | 7813.40 | 64.7 |
| 4,3,6, Ոչ էլեկտրական էներգիա | | | | |
| 4,5,1, Ճանապարհային տրանսպորտ | 8568.00 | 5947.20 | 3542.60 | 59.6 |
| Տնտեսական հարաբերություններ այլ դասերին չպատկանող | -4642.80 | | -5491.40 | |
| 4.9.1. Տնտեսական հարաբերություններ այլ դասերին չպատկանող | 350.00 | | | |
| 5.6.1. Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 400.00 | | | |
| 5,1,1 Աղբահանում | 2776.80 | 2151.40 | 2052.30 | 95.4 |
| 6,3,1, Ջրամատակարարում | 1000.00 | 900.00 | 112.10 | 12.5 |
| 6,4,1, Փողոցների լուսավորում | 6513.20 | 3500.00 | 5910.3 | 168.9 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6,6,1, Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ | 9442.80 | 9442.80 | 406.60 | 4.3 |
| 8,1,1, Հանգիստ և սպորտ | 7900.00 | 6075.00 | 5581.2 | 91.9 |
| 8,2,1, Գրադարաններ | 9140.40 | 6743.50 | 6516.00 | 96.6 |
| 8,2,3, Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | | | | |
| 8,2,4, Այլ մշակութային կազմակերպություններ | 1600.00 | 600.00 | 299.00 | 49.8 |
| 8,6,1, Հանգիստ, մշակույթ, կրոն /այլ դասերին չպատկանող/ | 1500.00 | 1400.00 | 937.70 | 67.0 |
| 9,1,1, Նախադպրոցական կրթություն | 28128.50 | 20893.00 | 16530.00 | 79.1 |
| 9,2,1, Հիմնական ընդհանուր կրթություն | 900.00 | 689.4 | 689.4 | 100.0 |
| 9,5,1, Արտադպրոցական դաստիարակություն | 1190.00 | 892.5 | 526.2 | 59.0 |
| 10,2,1, Ծերություն | 670.00 | 610.00 | 55.00 | 9.0 |
| 10,7,1 Սոցիալական հատուկ արտոնություններ | 1600.00 | 900.00 | 475.00 | 52.8 |
| 11,1,2 Պահուստային ֆոնդ | 2171.60 | 2171.60 | | 0.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 195431.0 | 139352.1 | 106068.2 | 76.1 |

ըստ տնտեսագիտական դասակարգման

| Ծախսատեսակը | 2020թ-ի ընդունված բյուջե (հազ.դրամ) | երրորդ եռամսյակի պլան (հազ.դրամ) | Փաստացին աճողական տեսքով (հազ.դրամ) | Կատարողականը երրորդ եռամսյակի պլանի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|
| (4111) - ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ | 68950.00 | 50000.00 | 49188.20 | 98.4 |
| 4112-ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ | 700.00 | 600.00 | 185.00 | 30.8 |
| (4212) - ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 6464.10 | 4185.00 | 3997.70 | 95.5 |
| (4213) - ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 120.00 | 90.00 | 33.90 | 37.7 |
| (4214) - ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 1070.00 | 712.50 | 609.80 | 85.6 |
| (4215) - ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ | 210.00 | 120.00 | 106.00 | 88.3 |
| (4216) - ԳՈՒՅՔԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | 250.00 | 250.00 | 160.70 | 64.3 |
| (4221) - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ | 998.80 | 756.30 | 170.40 | 22.5 |
| (4232) - ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 630.00 | 337.50 | 268.00 | 79.4 |
| (4233) - ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 250 | 187.50 | | 0.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| (4234) - ՏԵՂԱԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 600.00 | 450,0 | 431.60 | 143.9 |
| (4235) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 1950.00 | 1662.50 | 840.00 | 50.5 |
| (4237) - ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ | 400.0 | 150,0 | | 0.0 |
| (4239) -ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2950.0 | 1745.3 | 1745.3 | 100.0 |
| (4241) - ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3348.00 | 1812.50 | 586.50 | 32.4 |
| (4251) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ | 12840.00 | 6259.90 | 4341.90 | 69.4 |
| (4252) - ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ | 1920.00 | 1335.00 | 800.95 | 60.0 |
| (4261) - ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՀԱԳՈՒՍՏ | 980.00 | 705.00 | 639.95 | 90.8 |
| (4264) - ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ | 8536.80 | 4287.60 | 4077.60 | 95.1 |
| (4267) - ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՆՅՈՒԹԵՐ | 2610.00 | 950.00 | 922.60 | 97.1 |
| (4269) - ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ | 11263.20 | 6550.00 | 6547.80 | 100.0 |
| (4511) - ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ | 43128.90 | 32031.50 | 28098.00 | 87.7 |
| (4639) - ԱՅԼ | 1790.00 | 1430.00 | 420.00 | 29.4 |
| (4655) - ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ | 500.00 | 500.00 | 389.40 | 77.9 |
| (4657) - ԱՅԼ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱԱՇՆՈՐՀՆԵՐ | | 0.00 | | |
| (4729) - ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ | 2000.00 | 1400.00 | 475.00 | 33.9 |
| (4819) - ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԼ ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ | 150.00 | 150.00 | 110.00 | 73.3 |
| (4823) - ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ | 1185.00 | 765.00 | 598.00 | 78.2 |
| (4891) - ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (ՎԱՐՉ. ԲՅ.) | 2171.60 | 2171.60 | | 0.0 |
| (5112) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ | 4114.60 | 4264.60 | | 0.0 |
| (5113) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | 6292.80 | 2000.00 | 149.3 | 7.5 |
| (5122) - ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ | 600.00 | 850.00 | 78 | 9.2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| (5129) - ԱՅԼ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ | 10650.00 | 5400.00 | 5388.2 | 99.8 |
| (5134) - ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ | 200.00 | 600.00 | 200 | 33.3 |
| (8131) - ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 4642.8 | 4642.8 | 5491.4 | 118.3 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՝ | 204466.60 | 139352.10 | 117051.20 | **84.0** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 57-Ն

«13» հոկտեմբերի 2020 թվական — գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 86-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 86-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ծախսային մաս, ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝

1)«Բաժին 3, խումբ 2, դաս 1, հոդված 4819»՝ «0» թիվը փոխարինել «1000» թվով,
2)«Բաժին 11, խումբ 1, դաս 2, հոդված 4891»՝ «2171,6» թիվը փոխարինել «1171,6» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ 6 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| Հ. ՆԻԿՈԼՅԱՆ՝ | ________________ | ________________ | ________________ |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ | ________________ | ________________ | ________________ |
| Ա. ԴԱՎԹՅԱՆ՝ | ________________ | ________________ | ________________ |
| Ա. ՄԻՐԶՈՅԱՆ՝ | ________________ | ________________ | ________________ |
| Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ | ________________ | ________________ | ________________ |
| Ա. ՔՈՉՈՅԱՆ՝ | ________________ | ________________ | ________________ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝

Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«13» հոկտեմբերի 2020 թվական
գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 58-Ա

«13» հոկտեմբերի 2020 թվական — գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵԳՆԱԴԵՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

**որոշում է**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արեգնադեմ բնակավայրի 13-րդ փողոց թիվ 3 բնակելի տունը աճուրդով օտարման աճուրդային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպիչ)գործունեության կանոնակարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

| | *Կողմ՝ 6* | *Դեմ՝ 0* | *Ձեռնպահ՝ 0* |
|---|---|---|---|
| Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Ա. ՄԻՐԶՈՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |

Ա. ԴԱՎԹՅԱՆ՝ ------------------ ------------------ ------------------

Ա. ՔՈՉՈՅԱՆ՝ ------------------ ------------------ ------------------

Հ. ՆԻԿՈԼՅԱՆ՝ ------------------ ------------------ ------------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«13» հոկտեմբերի 2020թվական
գյուղ Ամասիա

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Ամասիա համայնքի ավագանու
2020 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 58-Ա որոշման

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԱՐԵԳՆԱԴԵՄ), ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԱՎԱՐՏ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-018-0015-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,03887 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական սահմաններում գտնվող (բնակավայր՝ Արեգնադեմ), համայնքի սեփականությունը համարվող բնակավայրերի նպատակային նշանակության անավարտ շենքերի ու շինությունների և նրաց պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-018-0015-0008 կադաստրային ծածկագրով 0,03887 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16012020-08-0018, հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք բնակավայր Արեգնադեմ 13-րդ թիվ 3), (հետագայում՝ անշարժ գույք), աճուրդով օտարման աճուրդային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպչի) գործունեության կանոնները:

2. Աճուրդի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում մշտական մրցութային-աճուրդային հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:>> թիվ 50-Ա որոշմամբ ստեղծված աճուրդային հանձնաժողովը, հետևյալ անհատական կազմով՝

*Հանձնաժողովի նախագահ՝*
Ջեմմա Հարությունյան – Ամասիա համայնքի ղեկավար
*Հանձնաժողովի անդամներ՝*
Արթուր Մանուկյան - Ամասիա համայնքի ղեկավարի տեղակալ
Շաղոյան Վարդան - Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
Պողոսյան Աշոտ - Ամասիա համայնքի Արեգնադեմ բնակավայրի վարչական ղեկավար,
Քոչոյան Ալեքսան – Ամասիա համայնքի ավագանու անդամ,

3. Աճուրդային հանձնաժողովը (աճուրդի կազմակերպիչը) ղեկավարվում է <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արեգնադեմ բնակավայրի 13-րդ փողոց թիվ 3 հասցեի բնակելի տունը աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գին հաստատելու մասին:>> թիվ 50-Ա որոշմամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

## II . ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Աճուրդի դրված գույքի համար սահմանվում է մեկ լոտ`

Լոտ 1 - բնակավայրերի նպատակային նշանակության անավարտ շենքեր և շինություններ նրաց պահպանման ու սպասարկման համար նախատեսված 018-0015-0008 կադաստրային ծածկագրով 0,03887 հեկտար բնակելի կառուցապատման նշանակություն հողամաս:

5. Աճուրդը անցկացվում է բաց` սակարկությունների ձևով, որի արդյունքում հաղթող ճանաչվում աճուրդի այն մասնակիցը, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել առավելագույն բարձր գին:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 58-Ա որոշման համաձայն աճուրդը նախատեսված է անցկացնել 2020 թվականի նոյեմբերի 20-ին ժամը 11⁰⁰-ին Ամասիայի համայնքապետարանի շենքում, նիստերի դահլիճում (հասցեն` Շիրակի մարզ, Ամասիա համայնք, գյուղ Ամասիա, 26-րդ փողոց, շենք 19) իսկ կրկնական աճուրդը` 2020 թվականի նոյեմբերի 27-ին , ժամը 11-00-ին:

7. Աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է չկայացած աճուրդի օրվանից 7-օրյա ժամկետում` 2020 թվականի նոյեմբերի 27-ին ժամը` 11⁰⁰-ին Ամասիայի համայնքապետարանի շենքում, նիստերի դահլիճում (հասցեն` Շիրակի մարզ, Ամասիա համայնք, գյուղ Ամասիա, 26-րդ փողոց, շենք 19) որը կազմակերպում և անցկացնում է աճուրդային հանձնաժողովը` սույն կանոնակարգի համաձայն:

8. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է նվազագույնը 2000 տպաքանակ ունեցող մամուլում, http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, համայնքապետարանի ինտերնետային պաշտոնական կայքում, տեղադրվում է համայնքապետարանի տեղեկատվական ցուցատախտակին և համայնքի մարդաշատ այլ վայրերում` մրցույթի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը` աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ տեղադրվում է աճուրդի անցկացման վայրում:

9. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները.

ա) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը.

բ) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը).

գ) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն).

դ) աճուրդի ձևը և անցկացման կարգը.

ե) աճուրդի պայմանները, այդ թվում` լոտի անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, նրա ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) և (կամ) կառուցման տարեթիվը, լոտի մեկնարկային գինը, ինչպես նաև էական այլ պայմանները.

զ) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

է) աճուրդում հաղթողին որոշելու կարգը.

ը) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները.

թ) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը.

ժ) աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը.

10. Հրապարակային սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

11. Հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել`

ա) աճուրդային հանձնաժողովի անդամները,

բ) համայնքի ավագանու անդամները,

գ) աճուրդավարի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը:

12. Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանվում է 2000 (երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը սահմանված է <<Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համայնքի ավագանու համապատասխա որոշմամբ:

13. Աճուրդին կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այլ անձին (Դիտորդ), ովքեր վճարել են մուտքի տոմսի վճարը: Աճուրդի մասնակից չհամարվող անձան համար (Դիտորդի) մուտքի տոմսի վճարը սահմանվում է 1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

14. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձիք (Դիտորդները), աճուրդ դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:

15. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդ անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին՝

ա) չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի նկատմամբ,

բ) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի,

գ) հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովի նախագահին՝ լոտի աճուրդ սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

դ) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ՝ առան աճուրդավարի թույտվության,

ե) չթաքցնել աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը (աճուրդ մասնակիցների համար):

16. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 20 թվականի սեպտեմբերի 22-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասի համայնքի Արեգնադեմ բնակավայրի 13-րդ փողոց թիվ 3 հասցեի բնակելի տունը աճուրդ օտարելու և աճուրդի մեկնարկային գին հաստատելու մասին:>> թիվ 50-Ա որոշմամբ, աճուր դրված գույքի մեկնարկային գինը սահմանված է 290 000 (երկու հարյուր իննսուն հազա Հայաստանի Հանրապետության դրամ, հիմք ընդունելով անշարժ գույքի շուկայական արժե գնահատման վերաբերյալ <<Ա.Գ. ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությա 2019 թվականի օգոստոսի 16-ի թիվ 08201911 հաշվետվությունը:

17. Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափո գումարով՝ 14 500 (տասնչորս հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որ վճարումից հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է <<Աճուրդի մասնակցի վկայական>>:

18. Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվու է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, որը կազմում է 14500 (տասնչորս հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

19. Աճուրդի նախավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպչին՝ աճուրդ անցկացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:

20. Աճուրդում հաղթած է համարվում աճուրդի այն մասնակիցը, ով աճուրդավարի մուրճիկ երրորդ հատվածից հետո աճուրդի դրված գույքի համար ներկայացրել է ամենաբարձր գնայի առաջարկ:

21. Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետ է սահմանվում 2020 թվական նոյեմբերի 5-ից մինչև նոյեմբերի 12-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 9:00-ից մինչև 17:00-ն, մարզ Շիրակ, Ամասիա համայնք գյուղ Արեգնադեմ 13-րդ փողոց թիվ 3 հասցեում:

22. Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում Ամասիայի համայնքապետարանում՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ից մինչև աճուրդի կայացմա նախորդ օրը՝ ժամը 9:00-ից մինչև 17:00-ն:

23. Աճուրդը սկսվելուց մեկ ժամ առաջ աճուրդային հանձնաժողովը (աճուրդի կազմակերպիչ իր նիստում գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը լիազորությունները հաստատող փաստաթղթերը և իր որոշմամբ թույլատրում է մասնակցե աճուրդին:

24. Աճուրդի արդյունքների մասին աճուրդի անցկացնելու օրը կազմվում է արձանագրություն որն ստորագրում են՝ աճուրդային հանձնաժողովի ներկա անդամները, աճուրդի հաղթող մասնակիցը, ցանկության դեպքում՝ աճուրդի մյուս մասնակիցները (մասնակիցը):

25. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ առք ու վաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

26. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

27. Սահմանված ժամկետներում առք ու վաճառքի պայմանագիրը չկնքելու և (կամ) գույքի գինը չվճարելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և այն փոխանցվում է համայնքի բյուջե:

28. Գույքի առք ու վաճառքի նոտարական վավերացման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են աճուրդում հաղթող ճանաչված և գույքը գնած մասնակցի կողմից:

29. Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին (մասնակիցներին) վերադարձվում է նախավճարը:

30. Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են 2020 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 19-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 9:00-ից մինչև 18:00-ն Ամասիայի համայնքապետարանում, աճուրդային հանձնաժողովի կողմից: Հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվում՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ը՝ մինչև ժամը 18:00-ն: Իսկ կրկնական աճուրդի հայտերն ընդունվում են՝ 2020 թվականի նոյեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 26-ը ժամը՝ 9:00-ից մինչև 18:00-ն, նույն հասցեում:

31. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են ՝

ա) հայտ՝ սահմանված ձևանմուշով,

բ) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,

գ) իրավաբանական անձանց և համայնքների համար՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

դ) նախավճարի և աճուրդի մասնակցության վճարի մուծման անդորրագիրը:

32. Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին:

33.Աճուրդում վաճառված անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

34. Աճուրդը համարվում է չկայացած եթե.

ա) Աճուրդին ներկայացել է միայն մեկ գնորդ կամ չի ներկայացել որևէ գնորդ:

բ) աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել:

գ) աճուրդում հաղթած անձը չի կնքել առք ու վաճառքի պայմանագիր և /կամ/ չի մուծել գնման գինը:

35. Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդային հանձնաժողովի որոշմամբ՝ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:

36. Աճուրդը և կրկնաճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում նոր աճուրդը կազմակերպում և անցկացնում է սույն կանոնակարգի և /կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

37. Սույն կանոնակարգի կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձ հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

## III . ԱՃՈՒՐԴԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

39. Աճուրդային հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

40. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների սահմանված թվի կեսից ավելին:

41. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

42. Աճուրդավարը և արձանագրողը հաստատվում են համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ:

43. Աճուրդային հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝ աճուրդը կայացած ճանաչվելու, աճուրդի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և համայնքի ղեկավարին աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  ԹԻՎ 59-Ա

«13» հոկտեմբերի 2020 թվական — գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 9 ՇԵՆՔ, 9 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՄՈՒՇԵՂ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՆՀԱԱՏՈՒՅՑ, ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի առաջարկությունը ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի փողոց 2, շենք 9, բնակարան 9 հասցեում գտնվող 32 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի առանձնատունը անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի բնակիչ Մուշեղ Անդրանիկի Ղազարյանին: Ընտանիքը բաղկացած է 6 անձից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ 6 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Ա. ՄԻՐԶՈՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Ա. ԴԱՎԹՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Ա. ՔՈՉՈՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Հ. ՆԻԿՈԼՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«13» հոկտեմբերի 2020թվական
գյուղ Ամասիա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 60 -Ա

«13» հոկտեմբերի 2020 թվական

գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 4 ԲՆԱԿՉԻ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 55-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետը և քաղաքացիների դիմումները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին.

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի թվով 4 բնակչի տրամադրել միանվագ դրամական օգնություն, ընդամենը՝ 80000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

1. Մարգարյան Կարեն - 20.000/քսան հազար/ դրամ,
2. Կարապետյան Արմեն - 20.000/քսան հազար/ դրամ,
3. Շաղոյան Մորիս - 20.000/քսան հազար/ դրամ,
4. Իվանյան Արծրուն - 20.000/քսան հազար/ դրամ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ 6 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| Հ. ՆԻԿՈԼՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Ա. ՔՈՉՈՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Ա. ՄԻՐՁՈՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Ա. ԴԱՎԹՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«13» հոկտեմբերի 2020 թվական
գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 61 -Ա

«13» հոկտեմբերի 2020 թվական

գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ <<ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱՆԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ>>-Ի <<ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ>> ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՀԱՎԱՔԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ մասի 42 կետի դրույթով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին.

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բյուջեից <<Հայաստան համահայկական հիմնադրամ>>-ի <<Մենք ենք մեր սահմանները>> համազգային դրամահավաքին հատկացնել 1,000,000(մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | *Կողմ՝ 6* | *Դեմ՝ 0* | *Ձեռնպահ՝ 0* |
|---|---|---|---|
| Հ. ՆԻԿՈՂՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ ------------------ ------------------ ------------------

Ա. ՔՈՉՈՅԱՆ՝ ------------------ ------------------ ------------------

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ՝ ------------------ ------------------ ------------------

Ա. ԴԱՎԹՅԱՆ՝ ------------------ ------------------ ------------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«13» հոկտեմբերի 2020 թվական
գյուղ Ամասիա